ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 43 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի N 1069-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2024 թվականի նոյեմբերի 26-ի «Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ (COP17) համաժողովի կազմակերպման և անցկացման կոմիտե ստեղծելու և դրա կազմը հաստատելու մասին» N 1069-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման վերնագրում, 1-ին կետում և հավելվածի վերնագրում «Կենսաբազմազանության մասին» բառերը փոխարինել «Կենսաբանական բազմազանության մասին» բառերով.

2) որոշման վերնագիրը «կազմը» բառից հետո լրացնել «և աշխատակարգը» բառերով.

3) որոշման 1-ին կետում «համաձայն հավելվածի» բառերը փոխարինել «համաձայն N 1 հավելվածի և աշխատակարգը՝ համաձայն N 2 հավելվածի» բառերով.

4) որոշման հավելվածում «Հավելված» բառը փոխարինել «Հավելված N 1» բառերով.

5) որոշման հավելվածում «Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ» բառերը փոխարինել «Շրջակա միջավայրի նախարարի տեղակալներ» բառերով.

6) որոշման հավելվածում «Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ (COP17) համաժողովի արտաքին գործերի նախարարության բանակցային խմբի ղեկավար-հատուկ բանակցող (արտաքին գործերի նախարարության քարտուղարության խորհրդական)» բառերը փոխարինել «Արտաքին գործերի նախարարության բազմակողմ քաղաքականության և զարգացման համագործակցության վարչության խորհրդական, COP17-ի բովանդակային-բանակցային թիմի ղեկավար, հատուկ բանագնաց» բառերով.

7) որոշումը լրացնել N 2 հավելվածով՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

21.01.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ